ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2015

Հունվար-Հունիս

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

1. ՀԱՄԱԽԱՌՆ ՆԵՐՔԻՆ ԱՐԴՅՈՒՆՔ

2015թ. առաջին եռամսյակում ՀՆԱ կազմել է 873.6 մլրդ դրամ, աճը՝ 2.2%: Երկրորդ եռամսյակի ՀՆԱ աճը գնահատվում է շուրջ 6%, իսկ առաջին կիսամյակի համար ավելի քան 4%:

ՀՆԱ արտադրության կառուցվածքում էական փոփոխություններ չեն արձանագրվել: 2015թ. նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել են արդյունաբերության, առևտրի և զուտ հարկերի տեսակարար կշիռները, աճել են ծառայությունների և գյուղատնտեսության տեսակարար կշիռները, իսկ շինարարության տեսակարար կշիռը չի փոփոխվել:

ՀՆԱ սպառման կառուցվածքում 2015թ. նվազել է տնային տնտեսությունների վերջնական սպառման ծախսերի մասնաբաժինը՝ 3.6 տոկոսային կետով, իսկ բնակչության անհատական և կոլեկտիվ պահանջմունքները բավարարող պետական հիմնարկների մասնաբաժինը ավելացել է 0.8 տոկոսային կետով: Նվազել են նաև հիմնական միջոցների համախառն կուտակման և նյութական շրջանառու միջոցների պաշարների փոփոխման մասնաբաժինները համապատասխանաբար 0.4 և 0.5 տոկոսային կետերով:

Քանի որ արտահանման նվազումն ավելի փոքր էր քան ներմուծման նվազումը, զուտ արտահանման տեսակարար կշիռը ՀՆԱ կառուցվածքում աճել է 3.9 տոկոսային կետով:

2015թ. համախառն կուտակումը նվազել է 6.4%-ով, այդ թվում՝ նվազել է նաև հիմնական միջոցների համախառն կուտակումը՝ 2.7%-ով:

ՀՆԱ ԻՐԱԿԱՆ ԱՃ 2013-2015թթ., %



ՀՆԱ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, %



ՀՆԱ ՍՊԱՌՄԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, %



ՀԱՄԱԽԱՌՆ ԿՈՒՏԱԿՈՒՄ/ՀՆԱ, %



2. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

Տնտեսական ակտիվության ցուցանիշը 2015թ. հունվար-հունիսին 4.2% է:

2015թ. հունիս ամսվա ցուցանիշը էականորեն գերազանցում է 2015թ. նախորդ ամիսների համանման ցուցանիշը:

2015թ. առաջին կիսամյակում տնտեսության բոլոր ճյուղերում արձանագրվել է աճ՝ բացառությամբ առևտրի շրջանառության, որը նվազել է 5.1%-ով:

Ծավալի առավելագույն աճ գրանցվել է գյուղատնտեսությունում:

Տնտեսական ազատության 2015թ. ինդեքսով Հայաստանը 52-րդ տեղում է 67.1 միավորով՝ նախորդ տարվա համեմատ նահանջելով 11 տեղով և 1.8 միավորով: Հայաստանը դասվում է չափավոր ազատ երկրների խմբին: Ըստ տարածաշրջանների ընդգրկված է Եվրոպայի խմբում և 43 երկրների շարքում զբաղեցնում է 23-րդ տեղը: Զբաղեցնում է առաջին տեղը ԱՊՀ, ինչպես նաև ԵԱՏՄ երկրների շարքում (Ղազախստան՝ 69-րդ, Ռուսաստան՝ 143-րդ և Բելառուս՝ 153-րդ), իսկ հարևան երկրներից զիջում է միայն Վրաստանին (22-րդ տեղ):

Տնտեսական ազատության 2015թ. ինդեքսով Հայաստանը բարելավել է իր միավորները 3 բաղադրիչների գծով, անփոփոխ մնացել 1 բաղադրիչի գծով և վատթարացրել միավորները 6 բաղադրիչների գծով:

Ամենացածր միավորով գնահատվել է «Օրենքի գերակայություն» հենասյունը:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇ, %



ԹՈՂԱՐԿՄԱՆ ԾԱՎԱԼԻ ԱՃ, % ՆԱԽՈՐԴ ՏԱՐՎԱ ՆՈՒՅՆ Ժ/Շ ՆԿԱՏՄԱՄԲ

	2013 S1	2014 S1	2015 S1
Արդյունաբերական արտադրանք	8.3	0.0	5.1
Գյուղատնտեսական արտադրանք	2.1	1.4	14.5
Շինարարություն	-8.8	0.4	0.6
Առևտրի շրջանառություն	3.5	5.6	-5.1
Ծառայություններ	4.4	3.9	3.3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏԿԵՐԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ 2015 ԻՆԴԵՔՍՈՒՄ

	2015	Փոփոխություն
Դիրք	52	-11
Միավոր	67.1	-1.8
Օրենքի գերակայություն		
Սեփականության իրավունքներ	20.0	-10.0
Կոռուպցիայից ազատություն	36.0	9.3
Կառավարության մասնակցության չափ		
Ֆիսկալ ազատություն	84.4	-2.1
Պետական ծախսեր	82.8	1.5
Կարգավորման արդյունավետություն		
Գործարար ազատություն	82.7	-0.4
Աշխատուժի ազատություն	64.3	-14.2
Մոնետար ազատություն	70.6	-6.4
Բաց շուկաներ		
Առևտրի ազատություն	85.4	-0.1
Ներդրումային ազատություն	75.0	5.0
Ֆինանսական ազատություն	70.0	0.0

3. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

2015թ. առաջին կիսամյակում արդյունաբերության աճը կազմել է 5.1%, ինչը պայմանավորված է հանքագործական արդյունաբերության, ջրամատակարարման և էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարման բաժինների աճով: Նվազել է միայն մշակող արդյունաբերությունը՝ 2.1%-ով:

Արդյունաբերության աճին առավելագույնս նպաստել են՝

- ✓ մետաղական հանքաքարի արդյունահանումը
- ✓ ծխախոտային արտադրատեսակների արտադրությունը
- ✓ թղթի և թղթե արտադրատեսակների արտադրությունը
- ✓ դեղագործական արտադրանքի արտադրությունը:

Մետաղական հանքաքարի արդյունահանման 35.5% աճին հիմնականում նպաստել են պղնձի հանքաքարի արդյունահանման՝ 115.8% և թանկարժեք մետաղների հանքաքարի արդյունահանման 81.5% աճերը:

Ծխախոտային արտադրատեսակների արտադրության 45.9% աճին նպաստել են ծխախոտի խմորման աճը 2835.8 անգամ և ծխախոտային արտադրատեսակների արտադրության 39.0% աճերը:

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ

	Արտադրանքի ծավալ մլրդ. դրամ	Աճ 2014թ. նույն ժ/շ նկատմամբ, %	Կառուցվածք, %	Նպաստման չափ, տոկոսային կետ
Արդյունաբերություն	613.6	5.1	100.0	-
Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում	113.2	34.8	18.4	5.7
Մշակող արդյունաբերություն	374.7	-2.1	61.1	-1.3
Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում	116.0	3.5	18.9	0.6
Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում	9.8	9.6	1.6	0.1

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՆ ԸՍՏ ՏԳ ԵՐԿՆԻՇ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

	Արտադրանքի ծավալ, մլրդ դրամ	Պատրաստի արտադրանքի իրացում, մլրդ դրամ	Արտահանում, մլրդ դրամ	Արտահանում իրացման նկատմամբ, %
Արդյունաբերություն	613.6	614.5	250.1	40.7
Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում	113.2	104.3	82.9	79.5
Մետաղական հանքաքարի արդյունահանում	111.5	102.2	82.1	80.3
Հանքագործական արդյունաբերության այլ ճյուղեր	1.7	2.0	0.7	35.8
Մշակող արդյունաբերություն	374.7	384.4	149.5	38.9
Սննդամթերքի արտադրություն	130.7	134.9	6.3	4.6
Խմիչքների արտադրություն	42.0	41.9	21.4	51.0
Ծխախոտային արտադրատեսակների արտադրություն	41.5	47.0	33.8	71.9
Թղթի և թղթե արտադրատեսակների արտադրություն	8.9	8.4	0.0	0.0
Ռետինե և պլաստմասսայե արտադրատեսակների արտադրություն	10.0	11.1	0.8	7.5
Դեղագործական արտադրանքի արտադրություն	3.8	3.4	1.8	52.9
Այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն	21.1	20.2	2.1	10.5
Հիմնային մետաղների արտադրություն	84.1	84.5	73.0	86.3
Պատրաստի մետաղական արտադրատեսակների արտադրություն	5.1	4.9	0.2	4.3
Մշակող արդյունաբերության այլ ճյուղեր	27.6	28.1	10.1	35.9
Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում	116.0	116.0	17.8	15.3
Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում	9.8	9.8	-	-

Մշակող արդյունաբերության 2.1%-ով նվազումն արդյունք է մասնավորապես հետևյալ հատվածներում արձանագրված արտադրության ծավալի նվազման.

- ✓ սննդամթերք՝ 7.7%-ով
- ✓ հիմնային մետաղներ՝ 7.2%-ով
- ✓ խմիչքներ՝ 17.9%-ով
- ✓ ռետինե և պլաստմասայե արտադրատեսակներ՝ 4.3%-ով:

Խմիչքների արտադրություն ապրանքախմբում նվազել են բոլոր ենթադասերի արտադրության ծավալները բացի ալկոհոլային խմիչքների (բացի կոնյակից) թորում, բազաթորում և խառնում ենթադասում, որն աճել է 1.2%-ով: Զգալի նվազում է արձանագրվել կոնյակի արտադրության և բնական հանքային և այլ շշալցված ջրերի արտադրության ենթադասերում, ինչը հիմնականում պայմանավորված է նշված ապրանքատեսակների արտահանման ծավալների նվազմամբ:

Հիմնային մետաղների արտադրության նվազումը մեծապես պայմանավորված է թանկարժեք մետաղների արտադրություն և թուջի, պողպատի և ֆեռոհամահալվածքների արտադրություն ապրանքախմբերի արտադրության ծավալների նվազմամբ, ինչը նշված ապրանքատեսակների արտահանման ծավալների նվազման արդյունք է:

Սակայն հիմնային մետաղների արտադրության հատվածում ամենամեծ տեսակարար կշիռ ունեցող ալյումինի արտադրությունն աճել է 7.8%-ով:

ՄՇԱԿՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

	Արտադրանքի ծավալ, մլրդ դրամ	Աճ 2014թ. նույն ժ/շ նկատմամբ, %	Կառուցվածք, %	Արդյունաբերության աճին նպաստման տաս. %
Սննդամթերքի արտադրություն	130.7	-7.7	21.3	-1.8
Հիմնային մետաղների արտադրություն	84.1	-7.2	13.7	-1.0
Խմիչքների արտադրություն	42.0	-17.9	6.8	-1.6
Ծխախոտային արտադրատեսակների արտադրություն	41.5	45.9	6.8	2.4
Այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն	21.1	6.9	3.4	0.2
Թղթի և թղթե արտադրատեսակների արտադրություն	8.9	33.3	1.4	0.4
Ռետինե և պլաստմասսայե արտադրատեսակների արտադրություն	10.0	-4.3	1.6	-0.1
Արտադրատեսակների արտադրություն, չներառված ուրիշ խմբավորումներում	6.9	5.9	1.1	0.1

ԽՄԻՉՔՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

	Արտադրանքի ծավալ, մլրդ դրամ	Աճ 2014թ. նույն ժ/շ նկատմամբ, %	Տեսակարար կշիռը խմիչքների արտ. մեջ, %
Ալկոհոլային խմիչքների (բացի կոնյակից) թորում, բազմաթորում և խառնում	3.4	1.2	8.1
Կոնյակի (բրենդիի) արտադրություն	19.4	-26.2	46.1
Խաղողի գինու արտադրություն	3.0	-3.9	7.2
Գարեջրի արտադրություն	3.5	-13.3	8.4
Բնական հանքային և այլ շշալցված ջրերի արտադրություն	5.4	-18.7	12.8
Բուրավետացրած կամ քաղցրացրած ոչ ալկոհոլային խմիչքների արտադրություն	7.3	-0.8	17.5

ՀԻՄՆԱՅԻՆ ՄԵՏԱՂՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

	Արտադրանքի ծավալ, մլրդ դրամ	Աճ 2014թ. նույն ժ/շ նկատմամբ, %	Տեսակարար կշիռը հիմնային մետաղների արտ. մեջ, %
Թուջի, պողպատի և ֆեռոհամահալվածքների արտադրություն	18.4	-17.9	21.9
Պողպատե խողովակների, սնամեջ տրամատների և համանման կցամասերի	1.0	-5.9	1.2
Սառը դրոշմում կամ ճկում	1.7	-37.3	2.0
Մետաղալարի արտադրություն	0.0	178.5	0.0
Թանկարժեք մետաղների արտադրություն	20.0	-17.3	23.7
Ալյումինի արտադրություն	21.4	7.8	25.5
Պղնձի արտադրություն	13.9	-2.5	16.5
Այլ գունավոր մետաղների արտադրություն	0.0	-64.9	0.0
Թուջի ձուլում	3.1	105.5	3.7
Պողպատի ձուլում	4.7	-10.3	5.6
Թեթև մետաղների ձուլում	0.0	-90	0.0

4. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2015թ. առաջին կիսամյակում աճ է արձանագրվել մշակույթ, զվարճություններ և հանգիստ, ֆինանսական և ապահովագրական գործունեություն, կացության կազմակերպում, մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն ծառայություններում:

2015թ. առաջին կիսամյակում Հայաստան ժամանած զբոսաշրջիկների քանակը նվազել է 1.3%-ով: Ժամանողների թվաքանակը գերազանցում է մեկնողներինը ավելի քան 24 հազարով: 2015թ. առաջին եռամսյակում ժամանող զբոսաշրջիկների քանակը նվազել է 4.0%-ով: Սակայն երկրորդ եռամսյակում՝ աճել է 1.8%-ով:

2015թ. առաջին կիսամյակում ՏՀՏ ոլորտի ծավալը նվազել է 2.4%-ով: Նվազել են ոլորտի բոլոր ենթաճյուղերը, սակայն ամենախոր նվազում արձանագրվել է ՏՀՏ հիմնական մասը կազմող հեռահաղորդակցության ենթաճյուղում՝ 6%: Սակայն աճ է արձանագրվել ՏՏ և տեղեկատվական ծառայություններ ոլորտում՝ 14.4%:

Ցանցային պատրաստվածության 2015թ. ինդեքսում Հայաստանը 58-րդ տեղում է 4.2 միավորով՝ նախորդ տարվա համեմատ բարելավելով դիրքը 7 տեղով և 0.2 միավորով:

2012թ. սկսած դիրքի ամենամեծ բարելավում գրանցած երկիրն է՝ դիրքը բարելավվել է 36 կետով:

Ըստ տարածաշրջանի ընդգրկված է ԱՊՀ երկրների խմբում, որտեղ զբաղեցնում է 4-րդ տեղը 9 երկրների շարքում:

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, %



ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

	2013 S1	2014 S1	2015 S1
Զբոսաշրջիկների թվաքանակ, հազար մարդ			
Ժամանողներ	422.9	496.0	489.5
Մեկնողներ	413.8	475.0	465.1
Զբոսաշրջիկների թվաքանակի աճ, %			
Ժամանողներ	-	17.3	-1.3
Մեկնողներ	-	14.8	-2.1

ՏՀՏ ՈԼՈՐՏԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ, ԾԱՎԱԼԸ ՄԼՐԴ ԴՐԱՄ/ԱՃԸ ՆԱԽՈՐԴ ՏԱՐՎԱ ՆՈՒՅՆ Ժ/Շ ՆԿԱՏՄԱՄԲ, %

	2013 S1		2014 S1		2015 S1	
ՏՀՏ, այդ թվում	109.6	11.9	110.4	0.4	109.1	-2.4
արտադրություն	0.9	-7.7	0.9	3.7	0.9	-1.3
առևտուր	12.7	28.4	13.2	1.8	13.5	-3.0
ծառայություններ, որից՝	96.0	10.3	96.3	0.2	94.7	-2.3
հեռահաղորդակցություն	81.8	9.3	81.7	-0.1	76.8	-6.0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏԿԵՐԸ ՑԱՆՑԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԻՆԴԵՔՍՈՒՄ

	Դիրք		Միավոր	
	2015	15/14	2015	15/14
Ցանցային պատրաստվածության ինդեքս	58	▲ 7	4.2	▲ 0.2
Միջավայրի ենթաինդեքս	78	▲ 5	3.9	▲ 0.1
Պատրաստվածության ենթաինդեքս	44	▲ 7	5.3	▲ 0.2
Կիրառելիության ենթաինդեքս	65	▲ 8	3.9	▲ 0.2
Ազդեցության ենթաինդեքս	54	▲ 13	3.9	▲ 0.4

5. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ

2015թ. առաջին կիսամյակում արձանագրվել է արտահանման ծավալի նվազում 1.3%-ով, որը պայմանավորված է առաջին եռամսյակի արտահանման ծավալի նվազմամբ: Երկրորդ եռամսյակում արձանագրվել է արտահանման աճ և արդեն հունիսին նախորդ տարվա հունիսի նկատմամբ արտահանման աճը կազմել է 20.1%:

Արտահանման ապրանքային կառուցվածքում առաջին 4 խոշոր ապրանքախմբերի տեսակարար կշիռը կազմել է 83.3%՝ նախորդ տարվա նույն ժ/շ 84.4%-ի դիմաց:

Արտահանման 49.3% բաժին է ընկնում 5 հիմնական առևտրային գործընկերներին՝ Չինաստան, Գերմանիա, Ռուսաստան, Կանադա, Իրաք:

Նախորդ տարիներին արտահանման գծով հիմնական գործընկեր հանդիսացող Ռուսաստանի տեսակարար կշիռը ընդհանուր արտահանման մեջ նվազել է 8.8 տոկոսային կետով՝ կազմելով 10.2%:

ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՐԻ ԴԻՆԱՄԻԿԱ

	2013 S1	2014 S1	2015S1
Արտաքին առևտրի ծավալ, մլն ԱՄՆ դոլար			
Արտահանում	700.9	703.5	694.4
Ներմուծում	1994.6	2049.1	1491.7
Առևտրաշրջանառություն	2695.5	2752.5	2186.1
Առևտրի հաշվեկշիռ	-1293.7	-1345.6	-797.3
Արտաքին առևտրի աճ, %			
Արտահանում	10.1	0.4	-1.3
Ներմուծում	-0.9	2.7	-27.2
Առևտրաշրջանառություն	1.7	2.1	-20.6

ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՐԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, %



ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՐԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, %

ԱՐՏԱՀԱՆՈՒՄ



ՆԵՐՄՈՒԾՈՒՄ



6. ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ

2015թ. առաջին եռամսյակում օտարերկրյա ներդրումների զուտ ներհոսքը կազմել է 60.2 մլրդ դրամ, որի 58.6%-ը ուղղակի ներդրումներ են: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ օտարերկրյա ներդրումները աճել են 1.5%-ով, իսկ ուղղակի օտարերկրյա ներդրումները նվազել են 49.3%-ով:

Զուտ ներհոսքի 27.7%-ը բաժին է ընկել հիմնային մետաղների արտադրությանը:

Ներդրումների զուտ ներքոսի 22.3% բաժին է ընկել Ռուսաստանի Դաշնությանը:

ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՕՏԱՐԵՐԿՅԱ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԶՈՒՏ ՆԵՐՀՈՍՔԸ ՀՈՒՆՎԱՐ-ՄԱՐՏԻՆ, ՄԼՐԴ ԴՐԱՄ

	2014 Q1	2015 Q1
Ընդամենը ներդրումներ, այդ թվում	59.3	60.2
Ուղղակի ներդրումներ	69.6	35.3

ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՕՏԱՐԵՐԿՅԱ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԶՈՒՏ ՆԵՐՀՈՍՔԸ ՀՆԱ ՆԿԱՏՄԱՄԲ, %



ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԶՈՒՏ ՆԵՐՀՈՍՔՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ԸՍՏ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ, %



ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԶՈՒՏ ՆԵՐՀՈՍՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ, %



7. ԳՆԵՐ ԵՎ ԱՇԽԱՏԱՎԱՐՁ

2015թ. առաջին կիսամյակում սպառողական գների ինդեքսը պահպանվել է թիրախավորված միջակայքում:

Գների ամենաբարձր աճն է արձանագրվել ոչ պարենային ապրանքների գծով, ընդ որում աճել են ոչ պարենային ապրանքների գրեթե բոլոր ապրանքախմբերի գները:

2015թ. առաջին կիսամյակում արձանագրվել է ներմուծման միջին գների աճի տեմպի արագացում նախորդ տարիների համեմատ: Նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ զգալի նվազել են գյուղմթերք արտադրողների իրացման գները:

Միջին ամսական անվանական աշխատավարձը կազմել է 178.4 հազար դրամ (գնահատական)՝ նախորդ տարվա 161.0 հազար դրամի դիմաց:

2015թ. երկրորդ եռամսյակում նվազագույն աշխատավարձը գերազանցում է նվազագույն պարենային զամբյուղը 1.5 անգամ և 1.2 անգամ զիջում է նվազագույն սպառողական զամբյուղին: Վերջին հարաբերությունը տարեցտարի կրճատվում է:

ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍԸ,
ՆԱԽՈՐԴ ՏԱՐՎԱ ՆՈՒՅՆ Ժ/Շ ՆԿԱՏՄԱՄԲ, %

	2013 S1	2014 S1	2015 S1
Սպառողական գների ինդեքս	104.1	104.0	105.1
Պարենային ապրանքներ	104.5	102.2	105.6
Ոչ պարենային ապրանքներ	105.3	102.4	105.7
Ծառայություններ	102.6	108.2	103.7

ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍՆԵՐՆ ԸՍՏ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՏՎԱԾՆԵՐԻ,
ՆԱԽՈՐԴ ՏԱՐՎԱ ՆՈՒՅՆ Ժ/Շ ՆԿԱՏՄԱՄԲ, %

	2013 S1	2014 S1	2015 S1
Արդյունաբերողների արտ. ԳԻ	104.8	108.7	102.3
Գյուղմթերք արտ. իրացման ԳԻ	91.9	105.5	72.5
Արտահանման միջին ԳԻ	104.0	102.9	101.7
Ներմուծման միջին ԳԻ	104.4	104.6	108.7

ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁ, ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԵՎ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԶԱՄԲՅՈՒՂՆԵՐ, ԸՆԹԱՑԻԿ ԳՆԵՐՈՎ, ՀԱԶԱՐ ՀՀ ԴՐԱՄ